

ԵՐԵՎԱՆԻ «ԳԼԱԶՈՐ» ՀԱՄԱԼՄԱՐԱՆԸ

հայտարարում է 2010-2011 ուստարվա
ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ

Ուսուցման ձևերը	ցերեկային (առկա), հեռակա
Բակալավրիատ	Ուսման տևողությունը 4 տարի
Հեռակա ուսուցում	Ուսման տևողությունը 5 տարի
Մագիստրատուրա	Ուսման տևողությունը 2 տարի
Ասպիրանտուրա	Ուսման տևողությունը 3 տարի առկա, 4 տարի հեռակա

Բուհի շրջանավարտներին տրվում է պետական նմուշի դիպլոմ:

Բուհում վարձի գեղչեր են սահմանված զոհված ազատամարտիկների և երկկողմանի ծնողագուրկ երեխաների համար:

Բուհն ունի նախապատրաստական բաժին՝ 10 ամիս տևողությամբ:

Համալսարանն ուսանողներին տրամադրում է ուսումնական և գիտական աշխատանքի, ինչպես նաև հանգստի ու ժամանցի լայն հնարավորություններ:

Ուսանողներին սպասարկում են գրադարանը, առարկայական լսարանները, օտար լեզուների խորացված ուսումնասիրությունն ապահովող լինգոֆոնային սրահները:

Համալսարանում գործում են համակարգչային լաբորատորիաները, որտեղ ուսանողները ստանում են համակարգչային գիտելիքներ, էլեկտրոնային գրադարանը, որը հնարավորություն է տալիս միանալու աշխարհի ամենատարբեր գրադարաններին և օգտվելու այնտեղ պահվող բազմալեզու գրականությունից, տեղեկատվական նյութերից:

Ուսանողների արտադրական և նախադիպլոմային պրակտիկաները կազմակերպվում և անցկացվում են հանրապետության իրավապահ մարմիններում (դատախազություն, դատարան), Սահմանադրական դատարանում, ՀՀ արտաքին գործերի նախարարությունում, ֆինանսաբանկային համակարգում, խմբագրություններում, հեռուստառադիոընկերություններում...

Բուհի ուսանողների ուժերով հրատարակվում է «Նոր Գլաձոր»

ուսանողական-երիտասարդական թերթը:

Բուհի կազմավորվող հեռուստառադիոստուդիայում ուսանողները կարող են պատրաստել և վարել հաղորդումներ:

Համալսարանում գործում են մարզասրահ՝ հազեցած ժամանակակից մարզագույքով, բուժկետ, բուֆետ, սրճարան:

Համալսարանի շրջանավարտներն ուսումը կարող են շարունակել ինչպես «Գլաձոր» համալսարանի, այնպես էլ Ազգային ակադեմիայի և այլ բուհերի ասպիրանտուրաներում և պաշտպանել գիտական թեզ: **«Գլաձորի» շրջանավարտներից 13-ը արդեն գիտությունների թեկնածու է:** Այսօր «Գլաձորի» ասպիրանտուրայում սովորում է 23 ասպիրանտ և 8 հայցորդ:

«Գլաձորի» շրջանավարտներն աշխատում են հանրապետության և արտերկրի պետական և ոչ պետական հիմնարկներում, կազմակերպություններում, խմբագրություններում, հեռուստառադիոընկերություններում, իրավապահ մարմիններում և այլուր:

Պետական և ոչ պետական միջնակարգ ուսումնական հաստատությունները գերազանցությամբ ավարտածները բուհ ընդունվում են հարցազրույցով:

«Գլաձոր» համալսարանում երկրորդ մասնագիտական կրթություն ստանալ ցանկացողներն առարկայական տարբերությունները հանձնելուց հետո հրամանագրվում են երկրորդ կուրսում:

Բուհն իրեն իրավունք է վերապահում կնքելու անհատական պայմանագրեր և սահմանելու անհատական վարձ:

Համալսարանի դիմորդների համար ուժի մեջ են պետական բուհերի ընդունելության քննություններից ստացած գնահատականները;

Մեկ ուստարվա վարձը **290.000** դրամ է:

Ընդունվել ցանկացողները պետք է ներկայացնեն դիմում համալսարանի ռեկտորի անունով, միջնակարգ դպրոցի ավարտական վկայական (բնագիր), միջնակարգ մասնագիտական կամ բարձրագույն կրթության դիպլոմ (պատճենը՝ նոտարական վավերացմամբ), բժշկական տեղեկանք՝ N086, 6 լուսանկար (գունավոր, 3x4 չափի), անձնագիր և **5000** դրամ:

Փաստաթղթերն ընդունվում են հայտարարության օրվանից, ամեն օր, ժամը՝ 10.00-18.00:

Ընդունելության քննություններն անցկացվելու են հուլիսի 20-30 և օգոստոսի 20-30:

Մանրամասն տեղեկությունների համար գանգահարել՝ **54-59-80, 54-59-82, 54-59-84:**

Համալսարանը մասնագետներ է պատրաստում հետևյալ մասնագիտությունների գծով

N	Մասնագիտություն	Որակավորում	Քննական առարկաները				
			Հայոց լեզու	Հայ գրակ.	Հայոց պատմ	Օտար լեզու	Մաթեմ.
1	Իրավագիտություն ա) միջազգային իրավական բ) քաղաքացիաիրավական գ) քրեաիրավական դ) սահմանադրաիրավական	իրավաբան	թեկադր.		բանավ.		
2	Համաշխարհային տնտեսագիտություն	տնտեսագետ	թեկադր.			հարց.	հարց.
3	Ֆինանսներ և վարկ	տնտեսագետ-ֆինանսիստ	թեկադր.				հարց.
4	Կառավարում (մենեջմենթ)	տնտեսագետ-մենեջեր	թեկադր.				հարց.
5	Հաշվապահական հաշվառում և աուդիտ	տնտեսագետ-հաշվապահ	թեկադր.				հարց.
6	Միջազգային հարաբերություններ	միջազգայնագետ-պատմաբան	թեկադր.		բանավ.	հարց.	
7	Ժուռնալիստիկա ա) լրագրամատյանային ժուռնալիստիկա բ) հեռուստառադիոժուռնալիստիկա եռուստառադիոհաղորդավարություն	ժուռնալիստ	թեկադր.	հարց.		հարց.	
8	Օտար լեզուներ (անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն)	բանասեր, անգլերենի մասնագետ և ուսուցիչ	թեկադր.			բանավ.	
9	Թարգմանչական գործ	օտար լեզվի մասնագետ, թարգմանիչ	թեկադր.			բանավ.	
10	Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա	ճարտարագետ	թեկադր.			հարց.	հարց.

	ա) ինֆորմացիայի պաշտպանության տեխնոլոգիաներ բ) հաշվողական տեխնիկա, համակարգեր և ցանցեր գ) հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում դ) կապի ցանցեր և կոմուտացիայի համակարգեր					
11	Հայոց լեզու և գրականություն	բանասեր-մանկավարժ	թելադր.	հարց.		

Երևանի «Գլաձոր» համալսարանի մագիստրատուրա

Կարող են ընդունվել ինչպես Երևանի «Գլաձոր» համալսարանի, այնպես էլ այլ բուհերի բակալավրի, դիպլոմավորված մասնագետի որակավորում ունեցող շրջանավարտներ մասնագիտական գիտելիքները խորացնելու, վերամասնագիտանալու, ինքնուրույն գիտական ուսումնասիրություններ կատարելու և մագիստրոսի որակավորման աստիճան ստանալու նպատակով: Բազային և ոչ բազային կրթություն ունեցող դիմորդների ընդունելությունը կատարվում է ընտրված մասնագիտության որևէ դասընթացի շուրջ (ուսանողի ընտրությամբ) հարցազրույցով:

Գործում են հետևյալ մասնագիտությունները.

Միջազգային հարաբերություններ`

միջազգային հարաբերությունների պատմություն, միջազգային անվտանգություն, միջազգային քաղաքականություն և իրավունք

Լրագրություն`

լրագրամասագրային լրագրություն, հեռուստառադիոլրագրություն, հեռուստառադիոհաղորդավարություն, միջազգային լրագրություն,

Ֆինանսներ`

ֆինանսական մենեջմենթ, բանկային մենեջմենթ, հարկեր և հարկազանձում, մաքսային գործ

Իրավագիտություն`

պետաիրավական, քաղաքացիաիրավական, քրեաիրավական, միջազգային իրավական

Օտար լեզուներ`

անգլերեն լեզու և գրականություն, թարգմանություն և միջմշակութային հաղորդակցություն, անգլերեն լեզու և միջազգային լրագրություն, անգլերեն լեզու և քաղաքագիտություն, օտար լեզվի դասավանդման մեթոդիկա, լեզվաբանություն և միջմշակութային հաղորդակցություն

Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա:

Մեկ ուստարվա վարձը **300.000** դրամ է:

Դիմորդները պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը`

դիմում բուհի ռեկտորի անունով,

բարձրագույն կրթության դիպլոմի և նրա հավելվածների բնագրերն ու պատճենները,

հրապարակված գիտական աշխատությունների ցուցակ (դրանց առկայության դեպքում),

4 լուսանկար (3x4 չափի):

*Երևանի «Գլաձոր» համալսարանն
իրավունք ունի ընդունելու ասպիրանտուրայի
որակավորման քննություններ հետևյալ
մասնագիտությունների գծով՝*

- ԺԲ.00.01** - «Պետության և իրավունքի տեսություն և պատմություն»
- ԺԲ.00.02** - Հանրային իրավունք «Սահմանադրական, վարչական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում»
- Ը.00.02** - «Տնտեսության, նրա ճյուղերի տնտեսագիտություն և կառավարում»
- Ը.00.03** - «Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ»
- Ժ.02.07** - «Օտար Լեզուներ»
- Է.00.01** - «Հայոց պատմություն»
- Ժ.01.06** - «Ժուռնալիստիկա»
«Ինֆորմատիկա»
«Փիլիսոփայություն»

Քննություններն անցկացվելու են մայիս-հունիս ամիսներին: Մասնակցելու համար կարող եք դիմել ասպիրանտուրայի բաժին:

**«ԳԼԱՁՈՐ» հանրակրթական միջնակարգ դպրոցը
հայտարարում է 2010-2011 ուստարվա ընդունելություն
5-12-րդ դասարանների համար:**

Շրջանավարտներին տրվում է ընդհանուր միջնակարգ կրթության վկայական՝ ատեստատ:

Դպրոցի պետական ավարտական քննությունների արդյունքներով շրջանավարտները կարող են ընդունվել «ԳԼԱՁՈՐ» համալսարանի 1-ին կուրս: Դասերն անցկացվում են «ԳԼԱՁՈՐ» համալսարանի շենքում:

Աշակերտներին սպասարկում են գրադարանը, առարկայական

կաբինետները, շուրջօրյա ինտերնետը, ֆաքսը, էլեկտրոնային փոստը, օտար լեզուների խորացված ուսումնասիրությունն ապահովող լինգոֆոնային սրահները:

Դպրոցում գործում են համակարգչային լաբորատորիա, որտեղ աշակերտներն ստանում են համակարգչային խորը գիտելիքներ, էլեկտրոնային գրադարան, որը հնարավորություն է տալիս միանալու աշխարհի բազմաթիվ երկրների գրադարաններին, օգտվելու այնտեղ պահվող բազմալեզու բառարաններից, գիտության տարբեր բնագավառների հանրագիտարաններից, գիտական և գեղարվեստական գրականությունից, տարբեր լեզուների դասընթացներից, լրատվական հարուստ նյութերից:

Դպրոցը նպատակ ունի վերականգնելու հայկական միջնակարգ դպրոցի ավանդույթները: Եթե ուզում եք ստանալ ռեալ գիտելիքներ, դիմեք Երևանի «ԳԼԱԶՈՐ» միջնակարգ դպրոց:

Մեկ ուստարվա վարձը **250.000** դրամ է: